3 սեպտեմբերի 2020 թվականի N 1451 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 678-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 15-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 678-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) հավելվածը 15-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 16-19-րդ կետերով.

«

16.	9616109000	Սրվակների պլաստմասսայե հեղուկացիր գլխիկներ	Պլաստմասսայե հեղուկացիր գլխիկներ- նախատեսված է ընկերության հեղուկ դեղաձևերի փաթեթավորման համար, որի մեկ փչոցը համարժեք է 1 մլ հեղուկի: Ցողացրի բարձրությունը կազմում է 34,5 մմ, տրամագիծը՝ 27,5 մմ	կգ	3 000	Չինաստան, Իրան	15 680 000
17.	2905450009	Գլիցերին (Glycerol BP)	դեղագործական ակտիվ դեղանյութ	կգ	2000	Չեխիա, Հնդկաստան, Չինաստան	33 000 000
18.	7010907900	Ապակյա դեղագործական սրվակներ	սրվակներ՝ 30 մլ	հատ	165 000	Իրան, Գերմանիա, Չինաստան	6 322 000
19.	3923509000	Պոլիմերային կափա-րիչներ դեղագործական սրվակների համար	պոլիմերային կափարիչներ	կգ	700	Իրան, Գերմանիա, Չինաստան	7 900 000

».

2) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «192 890 000» թիվը փոխարինել «255 792 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

2020 թ. սեպտեմբերի 4
Երևան